



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Թ. ԽԱՇԻԿՈՂԵՅԱՆ

# ՏԱՄ ՏԱՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՅԻ  
ՏԱՍՆԱՄՅԱ ՈՒՂԻՆ

355-3

Խ - 28

ՀԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1981



385.3

Խ - 28

Թ. ԽԱՅԿՈՂԵԱՆ

# ՏԱՅ ՏԱՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳԻՐՔԵՐՈՒՄ

(ՀԱՅԿԱԿԱՆ ՂԻՎԻԶԻԱՅԻ ՏԱՄԱՍՄԱՆ ՈՒՂԻՆ)

ՅԵՐԵՎԱՆ

1931

8 MAY 2013

41329

1 MAR 2010

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մենք հայակնություն չունենք և չենք ել ունեցել  
դիվիզիայի պատմագիրը գառնալու:

Քաղաքական բաժնի հանձնարարությամբ դիվի-  
զիայի տասնամյակի առթիվ գրված այս գրքույկով  
մենք նպատակ ենք ունեցել ամփոփել Հայկական Հը-  
րածիդ Դիվիզիայի քաղաքացիական կոխմակում տա-  
րած հաղթանակները և ուսուցման խաղաղ շրջանում  
ձեռք բերած նվաճումները ընդհանուր գծերով միայն:

Մեր դիվիզիայի պատմությունը լուսաբանող գրա-  
կանությունը տակավին աղքատ է, զուցե նման աղքա-  
տիկ վիճակում մեր ներկա գրքույկն ել վորեն ոգուա-  
կուա ինչպես Հայաստանի Կարմիր զորամասերի մար-  
տական սովորքները (տրադիցիաները) ժողովրդական-  
ացնելու այնպես ել դիվիզիայի հետազա պատմագրին  
ի մի ժողոված նույթ մատակարարելու տեսակետից:

Ժամանակի սղության և շտապողականության  
հետեվանքով գրքույկում անշուշտ կլինեն և կան խո-  
չոր թերություններ թե նյութերի ընտրության և թե  
շարադրության իմաստով, վորի համար աշխատում  
ենք հուսաւ, վոր մեր ընթերցողները ներողամիտ  
կլինեն:

Թ. Ա.

ՊԵՏՐՈՍԻ ՏՄԱՐԱՆ  
ՊԱՏՎԵՐ 1266  
ԳՐԱՌԵՊԳԼԻԿԱՐ 6 114 (Բ)  
ՏԻՐԱԺ 5000



ԶԿՐ. 59

## ՏԱՍ ՏԱՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

(Հայկական դիվիզիայի տասնամյա ուղին)

Բանվորա-գյուղացիական մեծ ու փառապանծ կարմիր բանակի անբաժան մի մասնիկը, նրա մարտական ջոկատներից մեկը՝ Հայկական Հրացանաձիգ Դիվիզիան, բոլորում և իր կազմակերպման պայքարի հաղթանակների ու շինարարության առաջին տասնամյակը:

Հայկական Դիվիզիայի տասնամյակը, ինչպես և նրա գոյությունն առհասարակ, մեզ համար չունի և չպետք է ունենա զուտ միայն տեղական, ՀԱՅԿԱԿԱՆ նշանակություն: Նա դասակարգային-ոլորտեարական, հեղափոխական-ինտերնացիոնալ կարմիր բանակի անքակտույի մի ջոկատն և, վորի հետեւվանքով նրա գոյության և քաղաքացիական կոխվների ճակատամարտերում տարած հաղթանակների փաստը ստանում և նաև միտրենական, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ նշանակություն: Հայկական դիվիզիայի կյանքն ու առողջան, մարտական գործողությունները, նրա ուազմա-քաղաքական շինարարության, ուսուցման և մարտական կոփման հերթական խնդիրները, չեն բգիսել միայն Խորհրդային Հայաստանի առանձնահաշտուկ պայմաններից, այլ միշտ և անզայմանորեն շաղկապվել են ԽՍՀՄ-ի պաշտ-

պանության, սոցիալիստական շինարարության և համաշխարհային պրոլետարական հեղափոխության հեռանկարների խոչըռագույն խնդիրների հետ:

Ահա թե ինչու անհրաժեշտ և և կարենոր մեր գիվիգիայի նվաճումների տասնամյա հաջուկացիուս, կատարելի այսոր՝ կապակցված անալայման Խորհրդային Միության ներքին ու արտաքին այժմյան դրության հետ:

Հայկական դիվիզիան իր տասնամյակը տոնում և սոցիալիստական շինարարության բուռն վերելքի, ծանր ինդուստրիայի աննախանթաց աճման, կապիտալիստական եկամենտների գեմ ամբողջ Փրոնտով սկսած սոցիալիստական լայնածավալ արշավի պայմաններում։ Մենք համառ ու հաստատ կերպով, չտեսնելած արագությամբ իրազործում ենք ընկ. Ենինինի՝ «Տընտեսական-տեխնիկական տեխնիկական առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնելու և առաջ անցնելու» լոգունդը։ Սոցիալիստական հոյակապ շինարարության վիթխարի աճման կոնկրետ արտահայտությունն են հանդիսանում ժողովրդական տնտեսության հնդամյա պլանի յերկրորդ տարվա արդյունքները։

Հնդամյակի յերկրորդ տարում խոչըռ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը՝ ի դիմաց նախատեսված 21,5 տոկոսի, աճեց 25 տոկոսով, ծանր ինդուստրիայի ընդհանուր արտադրանքը՝ ի դիմաց նախատեսված 26 տոկոսի աճեց 40 տոկոսով, կապիտալ ներդրումները ժողովրդական տնտեսության համայնշած սեկտորում աճեցին 84 տոկոսով, իսկ արդյունաբերության մեջ՝ 89 տոկոսով։

Նույն պատկերը մենք տեսնում ենք նաև դյուզատնտեսության ասպարիգում։

Հնդամյակով նախատեսված 1,500 հազար հեկտարի փոխարեն, անցած տարում ցանքսերի տարածությունն աճեց 7,800 հազար հեկտարով։ Հնդամյակով նախատեսված եր կոլտնտեսությունների ցանքսերի տարածությունը 1932-33 թ. հասցնել 14,500 հազար հեկտարի, իսկ խորհրդային տնտեսությունների հետ միասին՝ 18,900 հազար հեկտար, մինչդեռ անցած տարում՝ այսինքն հնդամյակի յերկրորդ տարում կոլտնտեսությունների ցանքսերի տարածությունը հասավ 38 միլ. հեկտարի, իսկ խորհրդային տնտեսությունների հետ միասին՝ 42 միլ. հեկտարի։ Կոլտնտեսությունների տոկոսը հիմնական հացահատիկային ըրջաններում հասավ 40-45-ի։

Ժողովրդական տնտեսության համայնշածած սեկտորի աճումն ինչպես արդյունաբերության, նույնակես և գյուղատնտեսության բնագավառում իր հետ բերեց գործադրկության խոպառ վերացում, բանվորների նյութական, կուլտուր-կենցաղային վիճակի վճռական բարելավում և ռեալ աշխատավարձի անշեղ բարձրացում։

Հակառակ Սիրցով-Լոմինաձեյի աջ-«ձախ» բլոկի ուղղությունիստական բամբասանեների և գատարկաթառանությունների, այժմ արդեն «գրված» են բանվորների և գյուղացիների նյութական-կուլտուրական դրության ԱՐՄԱՏԱԿԱՆ բարելավման հիմքերը» (Ստալին)։

Ամբողջ Փրոնտով սոցիալիստական այդ լայնածավալ արշավն անխուսափելիորեն ուղեկցվում և յերկրում դասակարգային պայքարի սրումով։

Հակառակ աջ ոպողիցիայի նախակին և նորկա լեղերներ՝ Բուխարինի, Ռիկովի, Տոմսկու և այլոց «կուլակության» սոցիալիզմի մեջ խաղաղ ներաճման»,

և գասակարգային պայքարի սրումը բացառով, արդեն  
իսկ սնանկացած տեսության, մեր ինքնիրի սոցիալիս-  
տական շնչարաբությունն իր առաջինազման ճամբին  
հանդիպում է թշնամու կատաղի դիմադրությանը,  
նրա հակազդեցությանը։ Յերկրում գասակարգային  
պայքարի սրման ամենացայտուն փաստն է հանդիսա-  
նում հենց վերջին ժամանակներս Պետքադրչության  
կողմէից հայտաբերված վնասարարների կազմակեր-  
պության հսկայական ցանցը, կոնդրատեվչչինան և  
«Արդյունաբերական կուսակցությունը»։

Կապիտալիստական վերջին դասակարգը մեր յերկրութ—կուլյակությունը, և քաղաքի բնութուական տարրերն զգալով իրենց անխուաափելի մահը, չեն ցանկանում կամավոր կերպով հեռանալ պատմության թատերաբեմից։ Անդառնալիորեն մեռնող դասակարգերն ու նրա գաղափարական գործիչներ՝ կոնդրատեվները, Սուխանովներն ու Ռամզլինները, վերջին ջղաձգություններն են անուան։ Խափանելու համար առցիալիքմի կառուցման գործը, վերականգնելու համար չին կապիտալիստական կարգերը մեր յերկրութ։

Այստեղից էլ հասկանալի յեւ, վոր կուսակցության և բանվոր դասակարգի՝ սոցիալիզմի կառուցման ձականում ունեցած նվաճումները ձեռք են բերվել գտառկարգային թշնամու դիմադրությունը հաղթահարելու, այն հետ մղելու զնոնիք։ Հասկանալի յեւ նաև, վոր կուսակցությունը չեր կարող իր գլխավոր գծի անարգեր իրագործումն ապահովել, առանց հաղթահարելու իր սեփական շարքերում կուլակության շահերի արտահայտությունը— նրա առենուուրան—աջ թերություն :

Միայն կուսակցության լենինյան կենտրոմի զեկաբարությամբ յերկու Փրոնտում, առաջին հերթին

ներկա շրջանի պլիսավոր վտանգի՝ աջ թեքման և «Ճախ» թեքման ու նրանց նկատմամբ հաշտվողականության դեմ մղած ճիշտ, անհաջող և վճռական պայքարի դժոկ հնարավոր յեղավ ԽՍՀՄ-ի տնտեսական-տեխնիկական հզորությունն հասցնելու իր այսորվա աստիճանին, հետ մղելու արտաքին և ներքին թշնամու դիմադրությունը :

Մեր անցած ըրջանը, ինչպես ընկ. Ստալինն է առավագ, յուղել է բնելման ըրջան:

«Այս յարկանուկ, յերբ այդ բեկումը Խօնքիքային Միության համար նշանակել ե շրջադարձ դեպի և ավելի լուրջ տեսնեսական վերելք, կսպիտական յամ յերկրների համար այդ բեկումը նշանակել ե շրջադարձ դեպի տեսնեսական անկում։ Մեզ մոտ, Խորիքը դային Միության մեջ սոցիալիստական չինարարության թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության անող վերելք ե, նրանց մոտ, կապիտալիստների մոտ՝ եկոնոմիկայի, թե արդյունաբերության և թե գյուղատնտեսության անող հգնածամ» (ՍՏԱԼԻՆ) :

Այն ժամանակ, յերբ մեկ մոտ ԽՍՀՄ-ում գնում է հսկայական ստեղծագործական աշխատանք, այսուղ էսպիտալիստական յերկրներում կատալի պայքար է մղվում սպառման չուկաների համար։ Այն ժամանակ, յերբ ԽՍՀՄ-ում կազմակերպվում են ենտուզիասաւորվածայինների բատալիոններ, կապիտալիստական յերկրներում գործադրությունների՝ վայրագրեն շահագործվող բանվորների, ճնշված ազգությունների զորացուները գրահանում են կապիտալիզմի հիմքերը։

Կապիտալիստական պետությունների ներքին հուկառությունների սրման, բանվոր դասակարգի տնտեսական կենցաղային պայմանների վատթարացման,

բուրժուաղիայի կողմից նախապատրաստվող նոր սլա-  
տերագմների և հեղափոխական հոքանքի անընդհատ  
աճման հետեւանքով, կապիտալիստական բովանդակ  
տշխարհը դարել և բուրջ ցնցումների, դասակարգային  
չերական թատերաբեմ :

Փակաւոր մեծ ընկած կապիտալիզմի անելանելիու-  
թյունն զգում են իմպերիալիստոները, նրանք լսում են  
սացիալիզմ կառուցող յերկրի հաղթական քայլերդը :  
Այս հանգամանքն ստիպում է կապիտալիստներին միա-  
նական բազի կազմել ԽՍՀՄ-ի դեմք : Հնդամյակի, հատ-  
կապես գյուղի սոցիալիստական վերակառուցման հա-  
ջողությունները, կուլակության, իրբև դասակարգի,  
վերացումը հանդիսանում են իմպերիալիզմի տգրեսի-  
վության աճման իսկական պատճառը, ընդունեմ ԽՍ-  
ՀՄ-ի : Միացյալ Նահանգների տնտեսական ճշնաժա-  
մով խորացած, այդ ճգնաժամը կապիտալիստական  
ոյլ յերկրների վրա տարածվելու արագ պրոցեսի ա-  
ռաջն առնելու մեծ անդոր և անլուծելի հակասություն-  
ների ճիրաններում խեղդվող իմպերիալիզմը չի կա-  
րող հնդամյա պլանի հաջող իրագործման մեջ չտեսնել  
իր սեփական պլանների խորտակումը, իր սեփական  
ժամը : Հնդամյա մեծ պլանի հաջողություններին ամբա-  
պնդելով պլուտօնարական դիկտատուրայի և սոցիա-  
լիզմի դիրքերը՝ խորտակում են բուրժուացիայի բոլոր  
պլանները, վորոնց նպատակն է ինքնել Խորհրդային  
Միությունը տնտեսական ողակման և ուղղմական ին-  
տերվենցիայի միջոցներով :

Այստեղից ել հասկանալի յե գառնում : Ուամզին-  
ների միջոցով ԽՍՀՄ-ի դեմ իմպերիալիստների, առա-  
ջին հերթին՝ Փրանսիական իմպերիալիստների կողմից  
ձեռք առնված ինտերվենցիոնիստական ակտիվ միջոց-

ները : Աբդյունաբերական կուսակցության հայտաբե-  
րումը, նրա դատավարության չափազանց հետաքրքիր  
պրոցեսը ԽՍՀՄ-ի և ամբողջ աշխարհի բանվոր դասա-  
կարգի առաջ մերկացրեց պատերազմի խսկակոն հեղի-  
նակների, Խորհրդային Միության դեմ ինսերվեն-  
ցիան կազմակերպող Պուանլարների, Բրիանների և  
այլ իմպերիալիստների խսկական դեմքը : Սակայն այս  
փաստերի մերկացմամբ չի նշանակում, վոր մենք վե-  
րացրինք ու հաղթահարեցինք ինտերվենցիայի վը-  
տանգը :

Ինտերվենցիայի վտանգը միշտ յեղել և և կա-  
այժմ, սակայն ավելի ուեալ և ավելի չոշտիելի, քան  
յերբեք :

ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա կազմակերպելու աշ-  
խատանքներին ակտիվ կերպով նպաստում են վոչ միայն  
սոցիալ-դեմոկրատները, սոցիալ-ֆաշիստները, միու-  
տրը Տրոցկին և Բրանդլեր—Տալ հեյմերներն իրենց ար-  
դանյակներով, այլև ամբողջ «Հոգեվոր աշխարհը»,  
Հոռմի պապի աղոթք-վայնասուններով : Ել չենք խո-  
սում ուսւ սպիտակ գվարդիականների, հայ, դաշնակ-  
ների, վրաց մենչեվիկների և մուսավատիստների մա-  
սին, վորոնց իմպերիալիստների թմբուկի տակ այսոր  
իրենց հաջոցն են միացնում հակախորհրդային ընդհա-  
նուր վոռնոցին :

Միջաղդային ներկա իրադրությունը սրբավո-  
րեցնում է մեղ՝ ԽՍՀՄ-ի ոլաշտպանության դիրքե-  
րում այժմս ավելի քան յերեկե մինել ավելի զգոն, ա-  
վելի աչալուրջ : Ինտերվենցիայի ուեալ վտանգը պտ-  
շանջում է խորհրդային ամբողջ հասարակայինությու-  
նից ուժեղագնել յերկրի պաշտպահությունը, կարմիք

## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԻՐ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԸ

բանակի և ռազմառության ու ռազմածովային կարմիր նախատրոմի մարտական հղորությունը, ինչպես այդ նշեց կուսակցության 16-րդ համագույմարը:

ԽՄՀՄ-ի պաշտպանության, կարմիր բանակի մարտապատճառության խնդիրները մենք այժմ չունեաք և դնենք ընդհանրապես, այլ չափազանց կոնկրետ, կապակցված միջազգային ներկա գրության, վերահսկապատերազմի ավելի աճող, ավելի ռեալ վտանգի հետ:

ԽՄՀՄ-ի գեմ աճող պատերազմական վտանգի այսպիսի պայմաններում և, ահա, վոր բանվորագյուղացիական մեծ կարմիր բանակի մի ջոկատ, Հայկական Դիվիզիան տոնում և իր առաջին տասնամյակը:

ՅԵԼՇԵԼՈՎ այս դրությունից՝ անհրաժեշտ և, վոր մենք դիվիզիայի տասնամյակը տոնենք միայն նրա նվաճումները, մարտական տրագիֆիաները լայն աշխատավորական մասսաներին սեփականություն դարձնելու, այլև Խորհրդային Մեծ Միության հարավային այս ճակատի պաշտպանությունն ել ավելի ամրացման հիմնական լոգունգի տակ: Դիվիզիայի տասնամյակը պետք է մի զորեղ խթան հանդիսանա՝ զարկ տալու բնակչության ռազմականացման աշխատանքներին, բանվորական կազմակերպությունների և զորանոցների կապի ամրացման, մեր մարտական ոլատարանության նոր, ավելի բարձր աստիճանի հասցնելուն և իմակերիալիստների ռազմական միջամատթյան ոլանները Հայաստանի լայն մասսաների առող մեր կացնելուն:

Խորհրդային Հայաստանի բանվորների և աշխատավոր դաշտացիների կողմից դեպի կարմիր բանակն ունեցած վերաբերունքը, այլև Հայկական Դիվիզիայի մարտական ամբողջան այսորված փաստերի խմասությանականարու և ըստ արժանության գնահատելու համար անհըստեցած և հարեվանցիորեն ծանոթանալ դաշնակցական Հայաստանի և նրա զինված ուժերի հետ:

Հայ խոչոր բուրժուազիայի Փաշիստական կուսակցության — գաշնակցության յերկու և կես տարվա փառատական տիրապետության որոք Հայաստանում ազգամիջյան պատակտումն ու կոտորածները հասան իրենց լարվածության ծայրահեղ աստիճանին: Փակված լինելով Յերեվանի աղքատիկ նահանգի, ցարական ինքնակարության այդ քայլքայմած գաղութի լրջանակներում, կորցրած լինելով իր տնտեսության դիրքերն Անդրկովկասի արդյունաբերկան խոչոր կենտրոններում (Բագու, Բաթում, Թիֆլիս)՝ Հայ բուրժուազիան, հանուն «Ճողիցծով մեծ Հայաստանի», ձեռնարկում եր իր անհանական քաղաքական կարողությունից վեր քաղաքական ավանդությանեցի: Վողեվորված նորանոր շուկաներ «Ճողիցծով» մեծ Հայաստան» ձեռնարկելու անմիտ հույսով՝ մի կողմից, իմակերիալիստական պետությունների դրդմամբ ու դատարկ խոսառումներով՝ մյուս կողմից, գաշնակցությունն իր տիրապետության կարձ ժամանակամիջոցում յերկիրը վերածեց հրի ու սրի, արյան ու ավելածության մի թատերաբեմի, բնաջինջ յեղանիմակերիալիստական մեծ պատերազմից իրենց կյանքը

մի կերպ փրկած բազմաթիվ հայ աշխատավորներ : Բավական կլինի միայն հիշել այն փաստը, վոր դաշնակցական «Հանրապետությունը» 2 և կես տարվա իր անփառունակ տիրապետության որոք մի քանի անգամ պատերազմ վարեց Աղբյեջանի, մի անգամ Վրաստանի և 2 անգամ Տաճկաստանի հետ : Ել չենք խոսում այն վայրադու գաղանային ջարդերի, կոտորածների և թալան ու կողապուտների մասին, վոր տեղի ունեցան դաշնակցական արյունոտ ձեռներով Զանգեզուրի, Շարուրի, Դարձագյաղի, Մեղրու, Աղբաբայի, Բոյուրզեղի, և Վեդի բասարի թուրքաբնակ գյուղերում, վորի ընթացքում հաղարավոր թուրք աշխատավոր գյուղացիներ բնաջընջվեցին, վորոնց գյուղերն ու ավաններն ավերակների ու մոխրակույտերի վերածվեցին :

Անվերջ պատերազմների ու աղքամիջյան կոտորածների հետվանքով արդյունաբերությունից գրեթե բռնովին դուրկ, Հայաստանի առանց այն ել իմպերիալիստական պատերազմի պատճառով միանգամայն ընկած գյուղատնտեսությունը հասալ չտեսնված անկման ու քայլքայման :

«Ժողովրդական տնտեսության կատարյալ անկում, արդյունաբերության բացարձակ կործանում : Գյուղատնտեսության կրծատում մինչեւ նախապատերազմյան չափի մեկ քառորդը՝ բազմաթիվ պատերազմներից և աղքամիջյան անվերջ ջարդերից և ավերակների վերածված գյուղերի կույտեր, արդիւական իմպերիալիստաների թելադրությամբ սկսած՝ վերջին՝ ավանտյուրայի՝ Հայտածնական պատերազմի ահռելի հետեւանքներ :

Յերկաթուղային հաղորդակցության կազմալու ծուռ 50,000-ից ավելի անողնական ու սովահար վորբեր

մի քանի հարյուր հաղար՝ վոչ մի տնտեսություն չունեցող՝ գործազուրկ և նպաստով ապրող բարոյալքված դաղթականների բազմություն, համատարած սով և անվերջ համաճարակներ, տարրական իրավունքի և որի նապահության լիակատար բացակայություն, դաշնակցական խմբապետների, կուլակների ու սպեկուլյանտների քմահաճ իշխանություն և սանձարձակ սխրագործություններ» :

Պատկերն ամբողջական կլինի, յեթե սրան ավելացնենք աշխատավորության այն սոսկալի շահագործումները, վոր տեղի ուներ դաշնակցական հանրապետության խմբապետների, մասուզերիսանների և սպեկուլյանտների կողմից : 40 հազարանոց բանակը և սոսկալիորեն ուռնացած պետական չինովնիկական ապարատի վոհմակներն ապրում եյին ընչազուրկ, սովոր ճիրաններում գալարվող խեղճ գյուղացիության հաշվին : Իսկ կողովուտաները, աշկարա թալանն ու կաչառակերությունը չափ ու հաշիվ չունեյին :

Ահավասիկ դաշնակցական Հայաստանի զգվանք միայն և գեպի դաշնակցությունը խորը դասակարգացի լին ատելություն առաջացնող պատկերը :

Դաշնակցական հանրակարգի, նրա նողկանք ու զայրույթ առաջացնող պետականության դրությունից յելնելով՝ մենք այժմս պետք ե նայենք դաշնակցական բանակի դեմքին, չափենք նրա մարտունակությունը :

Մոտ 800 հազար բնակչություն ունեցող վոքրիկ յերկրում դաշնակցական կառավարությունը պահում էր ահագին մի բանակ՝ բաղկացած 5 հետեւակային

\*) Ա. Խանջյան, «Խորհրդային Հայաստան» № 29/11 30 թ.

Երիտապեց, 4 հրեակաժնյակից, մասնագիտական և ուժանդակ զորքերով, թվով 40,000 հոգի:

Դաշնակցական հանրապետությունը մշտապես զենքի տակ եր պահում 12 հասակ, իսկ հայ-տաճկական վերջին պատերազմի ժամանակ՝ 15 հասակ: Այս թվի մեջ չի մտնում զինվորների այն հսկայական քանակը, վոր ծառայում եր ազգի «քաջ հերոսներ» —խմբապետներ՝ Դրոյի, Համազասպի, Դալի-Ղազարի, Սեպուհի, Յեապոնի, Մարտիրոսի և այլն նշանավոր և աննշան հերոսների, «բանակում»:

Այսպիսով՝ դաշնակցական կառավարությունը զինված ուժերի շնարարության մեջ իշխում եր-յեթե կարելի յե ասել—յերկու գիտականորեն և որամատկանորեն իրար հակասող սիստեմ:

Ա.Ա.Զինը «Բանակի շնարարության բեկուլյար» ձեւ կամ սիստեմն եր, վորտեղ ամեն ինչ յենթարկվում եր կամոնագրքի և հրամանի կույր, մեքենայորեն և տառացի կիրառման վողում: Այս հասկացողությունն ու հոգեբանություն կրողները հանդիսանում եյին հին ցարական բանակի գեներալակույտի հետամնաց չերտերը, վորոնք դաշնակցական բանակում բարձր աստիճաններ ստանալով՝ բոլորովին հաշվի չեյին առնում զինվորական մասսաների խորքերում, նրանց հոգեբանության մեջ առաջ յեկած նոր բեկումը, քաղաքական նոր արամագրությունները վորպես անմիջական հետեւանք՝ դյուրի սոցիալ-տնտեսական և քաղաքական այն ժամանակավա պայմանների:

Յերկրորդի Բանակի «իրրեզուլյար» խմբապետական ձեվը կամ սիստեմն եր: Այս ձեն առաջինի նկատմամբ ուներ արամագրծորեն միանդամայն հակառական պատկեր:

Դաշնակցական բանակի, «իրրեզուլյար» ձեւի համական կողմն այն եր, վոր այստեղ գրեթե ամենեվին անտեսվում եյին ուղղմական գործի գիտական հիմունքները: Գործողությունների և արարմունքների համար, անդամ զինվորական և քաղաքացիական ամենաբարձր իշխանության առաջ, կատարելապես բացակայում եր ովատասխանատվության զգացումը: «Տուր, ջարդի՛ր, փշթի՛ր, թալանի՛ր, սպանի՛ր, և աղատ՝ վախիախտ ծուռ գրած՝ ման արի»: Ահա խմբապետների գաստիարակության վոգին:

Ենդից չուտ վերկացող և՛ քաղաքական ավանդությունիստ զորք եր կազմակերպում վոչ թե «ազգի փըրկության» այլ թալանի, իր փորի ու գրպանի համար: Ահա դաշնակների զորքերի կազմակերպման մի բնորոշորինական է՝ «Ազգ, հայտնում եմ ի գիտություն Յերեվանի ինչպես քաղաքի, նույնպես և նահանգի բոլոր հայության, վոր յես ինձ համակեր բոլոր տղաներով այսոր մեկնում եմ ճակատ (կարդա թալանի թ. ի.): Այն բոլոր անձինք, վորոնք իմ զնալուց հետո իրենց կը հայտարարեն, վորպես Դալի-Ղազարի տղաներ, հայտնում եմ, վոր այդպիսիներն իմ անունը շահագործողներ են, և՛ ազգի և՛ զինվորական իշխանությունների կողմից կյենթարկվեն, վորպես շահագործիչաների, ամենաինաւագանգիւթիւնի համար: ԸՆ.Ա.Լ. Ղ.Ա.ԶԱՐՈՒ:

2-Մարտի 1918 թ.

Ա.Ե.Ք.ՊՈԼ.

Դաշնակցական բանակի այս ձեվում յերկրագրվում ու փառաբանվում եյին միայն խմբապետները: Զինվորների մեջ արմատանում եր՝ ստորագրության, կամայականության, հափշտակության, կոփողական, թալանի, առանց աշխատելու ուրիշի հաշվին ապրելու,



անմեկ ու անողնական մարդկանց սպանելու հոգեբանությունը:

Դաշնակցության բանակի շինարարության այս  
յերկու ձեվերը երար հյուսված է յին շինճու, արհեստա-  
կան կերպով, դրա համար ել ամեն քայլափոխում և՛ պէ  
տության և՛ «ռեգուլյար» դորքերի մեջ սիստեմատիկ  
կերպով առաջ եյին բերում հսկայական քաղաքական  
բարդություններ, իրենց ապօրինի դործողություննե-  
րով :

Ապաղասակարգայնացած ելեմենտներից կազմված խմբապետական «իրրեգուլյար» զորամասերին այդքան մեծ տեղ և նշանակություն տալը բցիսում է նրանից, վորդաչնակցությունը չեր հավատում իր՝ ճշշող մեծամասնությամբ բանվորներից և գյուղացիներից կազմված՝ «ռեգուլյար» զորամասերին։ Դաշնակցությունն իր հականեղակիոսական ռեակցիոն աղդեսիլ և ազգայնական պլանների իրադրությունը վատահում է, ամենից առաջ, զորքերի խմբապետական ձեվին։

Հսկայական անարխիկ այլ բանակը կազմակերպ-  
չորեն ղեկավարվում եր նույնքան անարխիկ անկազմա-  
կերպ ու անշնորդ կերպով։ Ղեկավարության սիստեմի  
բնորոշ կողմն այն եր, վոր չկար առանձին շտաբների,  
առանձին զինվորական գործիչների ու խմբավետների  
միջեվ համաձայնություն, կարգավահություն, ցածր  
աստիճանագործ բարձրին յենթարկվելու՝ բանակի հա-  
մար ճակատագրական նշանակություն ունեցող անշափ-  
կարելով այլ կանոնը։ Անշուշտ այս պատահական յե-  
րեսույթ չեր։ Դաշնակցության պետականության սիստե-  
մը, սկզբունքները, վարչական ձեվն իր բոլոր այլան-  
դակ ու անարխիկ կողմերով արտահայտություն եր գը-  
տել իր բանակի շինարարության վողջ սիստեմի միջև։

Ակամայից մեր առաջ ծագում ե խմբապետական բանակի մարտունակության հարցը, այն հարցը, թե ինչո՞ւ դաշնակցության վարած բոլոր պատերազմներում նրա բանակը թիկունքը դարձնում եր գեղի թշնամին :

Դաշնակցական տիրապետությունը Հայաստանում  
ստեղծվեց ԶՈՒՄՎ, հակառակ հայ բանվորների և աշխատավոր գյուղացու կամքի ու ցանկության : Մի «հանրապետություն» եր այդ, վորի ամրությունն ու «զորությունը» պայմանավորվում եր վոչ թէ մասսաների վրա հենվելով, նրանց շահերի պաշտպանն ու արտահայտիչը հանդիսանալով, այլ մառուցերի, մտրակի և բոնության ուժով : Զրկված լինելով Հայաստանի բնակչության հոծ մեծամասնության պաշտպանությունից, գործելով հակառակ նրա դասակարգային շահերի, իր հիմքում չունինալով փոքր ի շատե ամուր տնտեսական-տեխնիկական բազա՝ դաշնակցական հանրապետությունը հանձըն ված եր տարնըրքի բախտին, կապիտալիստական մեծ ու փոքր պետությունների կամքին : Հայաստանի տնտեսական ու Փիզիքական քայլքայման պրոցեսի հետ համաքայլ քայլքայլում եր նաև ինքը, դաշնակցական առանց այն ել խարխուլ պետականությունը, գառնալով անձարտունակ ու անզոր մի խրտվիլակ :

Դաշնակցական խմբապետական բանակը, դաշնակցական մառլզերիստական կարգերի վառ արտահայտությունն եր : Բանակն այն ժամանակ միայն կարող է մարտունակ լինել, յերբ մարտունակ է իր դասակարգը, վորի զինված բուռնցքն ու հենարանն ե հանդիսանում ինքը :

Այսպիսով՝ դաշնակցության բանակի անհարատունակության մի գլխավոր պատճառը ակտք և փնտրիչ

«Հանրապետության» վասած ու խարիսխած հիմքերում։ Յերկրորդ հիմնական պատճառներից մեկն ել այն է, փոր բանակի զինվորական մասսաների և հայկական բուրժուազիայի ու նրա կուսակցություն—դաշնակցության դասակարգային շահերի միջև գոյություն ունեցին խորը, անլուծելի հակասություններ։ «Ծովից-ծով», «մեծ Հայաստանի» զաղափարը, այս նպատակի համար՝ Ադրբեյչանի, Վրաստանի, Տաճկաստանի հետ տարվող պատերազմները և ազգամիջյան կոտորածները չելին բղխում այդ զինվորական մասսաների դասակարգային շահերից։ Ահա թե ինչո՞ւ ձականամարտերի վճռական մոմենտին դաշնակցական բանակի շինել հաղած բանվորները և գյուղացիները լքում ելին Փրոնտը «վոտներով դեմ քվեարկում» և պատերազմին, և՛ դաշնակցական տիբապետությանը։

Դաշնակցական բանակի տիբորոշ գծերից մեկն ել, փոր, իր հերթին խոչոր չափերով վնասում եր նրա մարտունակությանը, սովորական յերկույթ դարձած՝ հարատե ու մասսայական ԴԱՍՍԼԲՈՒԹՅՈՒՆՆ եր։

12 Հասակ շարունակ զենքի տակ պահելը, տասնյակ հապարակություղացիների ծառայությունը մերկ ու կիսաքաղց դաշնակցական բանակում, նշանակում ել զյուղի ամայացումը աշխատավոր ձեռքերից։ Մի կողմեց այս դրությունը, մյուս կողմից՝ բանակի զինվորների և «Հանրապետության» շահերի միջև յեղած հակառակությունը սոցիալական այն բաղան ելին, վորի վրա դասալքությունը անում, ահավոր չափերի յեր հասնում։ Բանվորա-գյուղացիական յերիտասարդության լայն մասսաները խորչում ելին դաշնակցական բանակից, հեռու ելին փախչում նրա բարոյալքող, քայլքայիշ տղղեցությունից։ Մեր հիշողության մեջ դեռևս թարմ

են այն որերը, յերբ դաշնակ գյաղաները մտրակի ուժով յերեկոները լցնում ելին դորանոցները, իսկ գիշերները հազարներով գասալքում ելին։ Դասալքում ելին վոչ միայն զորանոցից, «ուսուցման» խաղաղ ճակատից, այլև և մարտական գործողությունների պահին։ Դասալքությունն այնպիսի ծայրահեղ աստիճանի հասավ, փոր դաշնակցությունն հարկադրված յեղանակ հատուկ աշաբեկիչ մարմիններ ստեղծել՝ նրա գեմ կովելու համար։

Ահա մի նմուշ այն մասին, թե ի՞նչպես ելին կռվում դասալքության գեմ դաշնակ քյալագուղիները—  
0.2.7.

«Ի գիտություն բոլոր փախչողների և հայ ժողովրդի, հայտնում ենք, վոր 1-ի գիշերը հայրենիքի և հայ ժողովրդի դավանան յերեք հայ զինվորներ գնդակահարվեցին՝ մեկը բանակից ձի գողանալու, իսկ յերկուսը իրենց պոկից փախչելու համար։ Հայտնում ենք բոլոր փախչողներին, որ առաջ ներկայանան իրենց զրամաները և կատարեն իրենց զինվորական պարտականությունները, քանի ուշ չե, յեթե վոչ բոլոր դավանանենքը անյօնա կենքարկվեն նույն պատժին։ Մահ բոլոր դավանաներին, վորոնց պատճառով թուրքերը ներս են խոռվելու մեր Շիրակը։ Ահաբեկիչ Մարմին։

Ալեք-Պոլ 2-ն մարտի 1918 թ.»

Ահա մի յերկրորդ նույնանման դոկումենտ յեկը 1918 թ. Ալեք-Պոլ։ «Մարտի 4-ի յերեկոյան հայրենիքի ու հայ ժողովրդի դավանաներից մեկը յեկս գնդակահարվեց։ Մահ դավանաներին։» : «Ահաբեկիչ Մարմին։» :

(Բոլոր ընդգծումները ահաբեկիչներին են թ. թ.) :

Այս յերկու փաստաթղթերը վառ կերպով պատկերացնում են դասալքության ահռելի չափերը բանակում։

մի կողմից, և դրա հետեւանքով ստեղծված այն խռո-  
ճապային վիճակը, փորի մեջ գլուխը կորցրել եր դաշ-  
նակցական կառավարությունը:

Անխնայորեն գնդակահարվում ելին այն բանվոր և  
չքավոր գյուղացի զինվորները, վորոնք չելին ցանկա-  
նում սպանել իրենց դասակարգային պայքարի զինակից  
թուրք գյուղացիներին ու բանվորներին: Անխնա գնդա-  
կահարվում և հալածվում ելին մերկ ու սովոր ձիրաննե-  
րում տառապող այն զինվորները, վորոնք «պուլից ձի  
ելին գողանում», միսն ուտելու և կաշին հագնելու հա-  
մար: «Դավաճաններ» ելին համարվում և անխնա գըն-  
դակահարվում շինել հագած այն բոլոր բանվորներն ու  
գյուղացիները, վորոնք իրենց դասակարգային բնագդով  
դեմ ելին ու կովում ելին հայ խոչոր բուրժուազիայի  
ֆաշիստական կուսակցության, դաշնակցության խելա-  
կորույս քաղաքականության դեմ:

Դաշնակցական բանակի անմարտունակության, նրա  
լական խայտարղետությունն եր: Այդ բանակի շարքե-  
րում տեղ ելին դաել սկսած բանվորներից, բատրակ,  
չքավոր ու միջակ գյուղացիներից, կուլակներից ու սպե-  
րոյալքված ու խուլգանական տարրերը, վորի հետե-  
կատաղի կերպով քան գյուղում, դասակարգային պայ-  
քար եր տարիում: Յերկրի ներսում տեղի ունեցող սո-  
ցիալ-քաղաքական պրոցեսները, մասսաների մեջ գեղի  
դաշնակցությունը հետպէտե աճող անզնւապ դժուռու-  
թյունը ցայտուն արտահայտություն և նախատավոր հող

բությունը դաշնակցական բանակի մարտունակության  
նկատմամբ ուներ կործանարար ազդեցություն:

Թշնամու գնդակների տարափի տակ, մերկության,  
քաղցի ու համաճարակների ճիրաններում դաւարվող զին  
վրական մասսաների հարուցած՝ «հանուն ինչի՞», ո՞ւմ  
վեմ» «ինչո՞ւ համար ենք կովում ու արյուն թափում»  
հարցերին, դաշնակցությունը չկարողացավ և չեր կա-  
րող պատասխան տալ: Նրա դաստիարակության մեթո-  
դը հիմնված եր սոի, խաբեքայության ու կեղծիքի վը-  
լա: Իսկ դասակարգին խաբել անհնարին և—այդ խա-  
բեքայությունը վաղ թե ուշ կմերկացվի:

Ել չենք խոսում այն մասին, վոր դաշնակցական  
խմբակետական բանակի սպառազինման, շինարարու-  
թյան, մարտական ուսուցման հիմքում չկար վորոշակի  
սիստեմ, վորովհետեւ ճիշտ նույն վիճակում եր դտնվում  
հենց ինքը՝ դաշնակցական վողջ պետականությունը:  
Զինվորական մասսաների դաստիարակության սկզբուն-  
քը թթու նացիսնալիզմն ու «Ճովից-Ճով» Հայաստանի  
գաղափարներ, վոր յերբեք չեր գուգողողվում նրանց մե-  
ծամանության դասակարգային շահերի հետ: Ռազմա-  
կան շինարարության հարցի սկզբունքային զիտական  
կողմով վոչ վոք չեր հետաքրքրվում: Առանձին զինվո-  
րական միավորների և առանձին զինվորների մարտա-  
կան ուսուցման լուրջ գործով վոչ վոք չեր զբաղվում  
և հնարավոր ել չեր զբաղվել, վորովհետեւ զորամասերի  
անձնական կազմը դասակրության և անդադար զորա-  
հավաքի պատճառով միշտ փոփոխվում եր: Զինվոր եր  
կոչվում ամեն վոք, ով հազին ուներ անդլիական կամ  
ամերիկական շինել, մինչև հերթական դասակրությու-  
նը: Իմպերիալիստական պատերազմի մարտական վիթ-  
խարի փորձը բոլորովին հաշվի չեր առնվում, այն փոխա-

բինվում եր քարական բանակի հին կանոնագրքի բյուրոկրատիկ, տառացի կիրառումով:

Ահա ամփոփ կերպով դաշնակցական-խմբապետական տիրահաջուսակ բանակի անմարդունակության պատճառների գումարը:

Ահա քառոսային այն զրությունը, վորում ուժեղանում ու սաստիկանում եր այդ բանակի քայլայման, բարոյալքման պրոցեսը:

Միշտ քայլայլելով, միշտ գեղի անկում սահելով՝ դաշնակցական բանակն իր միջից առաջացնում, ջոկում եր այն գիտակից հեղափոխական տարրերին, վորոնք հետագայում՝ Հայաստանի խորհրդայնացման որերին հանդիսացան Հայկական կարմիր բանակի հիմնական դրասուները:

Դաշնակցական բանակի քայլայման «ներքին» գործոններին լրացնում եին անշուշտ «արտաքին» գործոնները: Պրոլետարիատի դիկտատորայի ամրացումը Խոստանաստում, Կարմիր բանակի հաղթանակները՝ ցարկան գեներալների և սուսարյելլրյա ինտերվենտների դեմ, Աղբյուջանի խորհրդայնացումը 1920 թ. մայիսյան ապստամբությունը Հայաստանում, կոմունիստների բնդհատովյա համառ ու անդուռ աշխատանքները յերբում և բանակում սրմանք այնպիսի զորեղ ազգակներ ելին, վոր կարճ ժամանակում կոնկրետ արտահայտություն գտան դաշնակցական բանակում և ներսից խարխեցին այն:

Դաշնակցական բանակի գինվորների և սպայկազմի առողջ հեղափոխակ չերակը 1920 թ. մայիսյան անցքերի ժամանակի միացան բանակում աշխատավոր դյուզացիության հետ, իւրեն զենքն ուղղելով դաշնակցական տիրապետության

դեմ: Այստեղից և ահա, վոր սկիզբ են առնում մեր այսորվա Հայկական Հրաձիգ գիվեղիայի պատմության առաջին եջերը:

Մայիսյան ապստամբություն ժամանակավոր պարտությունից 6 ամիս հետո—1920 թ. նոյեմբերի 29-ին, —Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Կոմկուսակցության զեկավարությամբ, Խոստանաստում կարմիր և Խորհրդայնին Սպրեցանի բանակի ոգնությամբ վերջնականապես տապալեցին դաշնակցական տիրապետությունը Հայաստանում և հաստատեցին Խորհրդայնին Իշխանություն:

Հայաստանի հյուսիսից Խորհրդայնացման լուր լսելուց հետո Հայաստանի ապստամբ բանվորների և աշխատավոր դյուզացիների կամքով ու ցանկությամբ արդեն պատմության աղբանոցը նետված, իշխելու զեկավարելու և ապրելու իրավունքից զրկված դաշնակցությունը 1920 թ. զեկտեմբերի 2-ին, իր պատվիրակության միջոցով, Տաճկաստանի հետ Ներքություն՝ կնքեց մի խայտառակ ու լկու պայմանագիր:

Այդ պայմանագրով դաշնակցությունը նպատակ ուներ իր դարավոր թշնամու — Տաճկաստանի միջոցով ու ոգնությամբ կասեցնել Խորհրդայնին իշխանության հաստատումն ու ամրացումը Հայաստանում:

Գաշնակցությունն իւ այդ ստոր քայլով թքեց իր եյության, անցյալի, գաղափարների «ծովից-ծով», մեծ ու անկախ» Հայաստանի վրա, աղերսարար խնդրելով տածկական ակայաներից միայն Յերեվանի նահանգը:

Յեվ այդ ամենը միայն նրա համար, վոր բայլենիկները չմտնեն Հայաստան: Բայց ավաղ: Հեղափո-

Խությունը, կախվածք, ալտիք ու գեն չպրտեց և դաշնակցության և՝ նրա դավաէիր պլանները:

Հայաստանն ամբողջովին խորհրդայնացավ:

Մեր խելամիտ ու խաղաղության քաղաքականության հետեւանքով, վերջնականապես հիմք գրվեց Տաճկաստանի հետ բարի դրացիական հարաբերությունների:

Ահա Սոցիալիստական Խորհրդ. Հայաստանի Դիմիկայի առաջին տասնամյակն է այս, վոր տոնում ենք այժմ:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

(Պատմական մի ժամկի ակնարկներ)

Հայկական Հրացանաձիր դիմիկայի պատմության սկիզբը ձելականորեն վորոշող յերկու փաստաթուղթ կամ մեր ձեռքի տակ:

Առաջինը. «Իշխանության փոխանցման ըրջանում իր խրավիլակային դերով անցքերի յերեսն ընկած խըմբակետ Դրոյի» ձեռուլ 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրված հրամանն է, ըստ վորի Հայաստանի դորժերը վերակազմվում են Կարմիր բանակի:

Երրորդը. Հայաստանի հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 5-ի. վորոշումն ե՝ Հայաստանում առանձին ռազմական դորժերի ժողովրդական կոմիսարիատ կաղամակերպելու մասին:

Ահա սրանք են մեր դիմիկայի հորելյանական ամսի թվերը, վորոնք, իհարկե, պետք ե հասկանալ պայմանական ձեվով:

Փաստականում, Հայկական Հրաձիր Դիմիկայի պատմության սկզբնական ակունքները պետք ե փըստել ավելի հեռուները. Ալեք-պոլի (Լենինականի) բան-

կորության (գլխավորապես յերկաթ գծի և տպագրական բան բանկորության) և աշխատավորության՝ 1920 թ. մայիսի 1-ին ցույցերն ու զինված ընդհարումները, դաշնակցության հետ: Դաշնակցության հեծդնդի մի մասի և կապիտան Մուսայելյանի՝ իր զրահագնացքով՝ միացումն ապստամբներին: Նույն թվի մայիսի 10-ին զենքի ուժով, կայազրի հեղափոխական զինվորների զինված ովնությամբ Խորհրդային իշխանության հաստատումը (Ալեք-պոլում\*): 1920 թ. մայիսի քաղաքացիական կոկմաներ՝ Սարիղամիչում, Ղարսում, Ալեք-պոլում, Ղաղախում, Ն. Բայազետում, վորոնց ընթացքում տասնյակ հազարավոր հեղափոխական դյուդացիներ, բանվորներ և զինվորներ առաջին անգամ զենքը ձեռներին գուրս յեկան ընդդեմ դաշնակցության խմբապետա-մասուղերիստական կարգերի: 11-րդ բանակի կազ-

\*) Մայիսի 10-ին Ալեք-պոլում ստեղծված Խորհրդային իշխանությունը չորս որից հետո, մայիսի 14-ին, թշնամու՝ քանակով և կովի տեխնիկական միջոցների գերազանց ուժերի ճնշման տակ ընկավ:

Սրա պատճառներից մեկն ել այն է, վոր Ալեք-պոլի Խորհրդային իշխանությունը, նախ՝ հնարավորություն չունեցավ կամպիլու Խորհրդային Ռուսաստանի և Ալեքրեչանի հետ, յերկրորդ՝ զորքին ու բնակչությանը կերպելու համար չուներ պարեն:

Դաշնակներն Ալեք-պոլում վերահաստատվելուց հետո մի չաեսնված հալածանք սկսեցին կոմունիստների դեմ: Բանտերը լիփ լեցուն ելին կոմունիստներով, վորոնք ազատվեցին տաճիկների կողմից Ալեք-պոլը գրավվելու նախորեյին:

Մի քանի ականավոր կոմունիստներ—բագրատ Ղարիբջանյան, Փանյան, Պրիպիլսկի և ուրչները գաղանար գլխատվեցին դաշնակների ձեռքով:

մում յեղած հայերից և, Դադախի ապստամբությունը ճշնվելուց հետո, Խորհրդային Ադրբեջան փախած բազմաթիվ ապստամբ-քաղաքական էմիգրանտներից, Արմենկոմի (Հայկոմկուսի արտասահմանյան բյուրոյի) և 11-րդ բանակի հեղափոխական ռազմական խորհրդի կողմից 1920 թ. կեսերին կազմակերպվում են սկզբում յերկու գումարտակներ, ապա առանձին 3-րդ հրաձըդային գունդը, վորոն իր մարտական գործողություններով շատ խոշոր դեր խաղաց Հայաստանի խորհրդայնացման սկզբնական շրջանում՝ դաշնակցության դրույթի վեմ տարած իր մի քանի հաղթանակներով։

Այստեղից ել ահա սկիզբ են առնում ու կոփվում Հայաստանի սլորետարական հեղափոխության՝ զինված նախնական բջիջները, վորոնք փառքով ու հաղթանակով պսակեցին իրենց կարմիր մայիսի և նոյեմբերի մարտական օրերը, հանդիսանալով ապագա Հայկական դիվիզիայի պիտոններներ։

Հայաստանի Կարմիր բանակը կազմակերպվում և ամրողապես Ռուսաստանի Կարմիր բանակի հարուստ փորձի հիման վրա և նրա հիմնական սկզբունքներով։

Հայաստանի խորհրդայնացումից և ռազմական գործի ժողկոմատ ստեղծելուց անմիջապես հետո, կարմիր բանակը կազմակերպչորեն ամրացնելու համար ձեռք են առնվալում հետեւյալ նախնական միջոցները։

## 1. ՀՐԱՄԱՆԱԾՈՒՅԱՆ ԿԱԴՐԵԲԻ ԽՆԴԻՐԸ

Ամենից առաջ՝ Հայաստանի Կարմիր բանակից վետարվում են չին, դաշնակցական բանակի հակահեղափոխական գեներալներն ու սպաները, թվով մոտ 500-600 հոգի, վորոնք միանդամայն թշնամական դիրք ունե-

լին գեղակի նորաստեղծ Խորհրդային իշխանությունը։ Սնխնա կերպով դուրս վտարվեցին նաև Վրանգելյան և Դենիկինյան ջարդված բանակների նախկին սպաները, վորոնք Ռուսաստանի Կարմիր բանակի հուժկու հարվածների տակ փախել ելին Հայաստան և տեղ ու աստիճան դառնել դաշնակցական բանակում։ Այդ կարգի ունակցիոն հակահեղափոխական հրամատարների վտարումը հանդիսանում եր Կարմիր բանակի շինարարության հիմնական դրավականներից մեկը։

Դաշնակցական բանակի օպայակազմի այն մասը, վորակազմված եր գլխավորապես բավորներից ու գյուղացիներից վորոնք մայիսյան ապստամբության և նոյեմբերյան հեղափոխության որերին անցել ելին մեր կողմը թողնվեց, Կարմիր բանակի շաբաթում։

Այսպիսով իր ամբողջ ծանրությամբ Հայաստանի Կարմիր բանակի կազմակերպման որհին մեր առաջ դրված եր հրամակազմի խնդիրը։ Խորհրդային Հայաստանի նոր Կարմիր բանակի համար նոր հրամակազմ։ Վորովհեակ «Մատաղ» հեղափոխական բանակի մեջ կարող ե անհրաժեշտ կազմակերպչական կապ ու դասակարգացին կայունություն ստեղծվել գիտակից բանվոների ու գյուղացիների միջից յելած, առաջին նվազ թեկուզ կրտսեր, հրամատարական կազմի միջոցով միայն։ Ավելի ընդունակ ու յեռանդուն և սոցիալիզմի գործին նվիրված զինվորներին հրամատարական պաշտոններին պատրաստելը Բանակի ստեղծման ամենակարևոր խրեգիրներից մեկն ե (Համկոմկուսի ծրագիրը)։

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ ե բանակի կազմակերպության և սպերատիվ դեկագարության համար, ԱԱՅՆ ԶԱՓԵՐՈՎ, ԳՈՐԾԻ ԴԱՅԻ ԴՆԵԼ ՀԻՆ ԲԱՆԱԿԻ

ԴՊՌՈՅՆ ԱՆՑԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԵՑՆԵՐԻՆ» :  
Վորովես անհրաժեշտ պայման... «Հրամատարական  
կազմի լիսակատար վերահսկողության կենտրոնացումը  
բանվոր դասակարգի ձեռքում» (Համկոմիկուսի ծրա-  
պերը, ընդգծումներն իմն են թ. լլ.) :

Ահա այսպիսի լուրջ և ծանր խնդիր եր գրված մեր  
առաջ, Հայաստանի Կարմիր բանակի կազմակերպման  
սկզբնական ըրջանում : Թե ի՞նչպես մենք ստեղծեցինք  
Հրամկազմի նոր, մեր կադրերը, այդ մասին հետո :

## 2 ՔԱՂԱՐՄԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ .

«Կարմիր բանակի ռազմական ուսուցման ու գաս-  
տիարակության դործը պետք է կատարվի դասակարգա-  
յին միասնականության և սոցիալիստական լուսավո-  
րության հիմունքով : ՈՒՍՏԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԲԱՐԵ-  
ՀՈՒՅԾ ՅԵՎ ԱՆՁՆՎԵՐ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻՑ ՔԱՂԱ-  
ՔԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐ՝ ՔԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՊ-  
ՆԵՐԻՆ ԿԻՑ և Կոմունիստական բջիջների կազմակեր-  
պության, յուրաքանչյուր դորամասում՝ ներքին ի-  
դեական կազմ և գիտակից դիսցիպլինա հաստատելու  
համար» (Համկոմիկուսի ծրապերը, ընդգծումն իմն է  
թ. լլ.) .-

Մեր կուսակցության այս հիմնական գրութիւ-  
յնենելով՝ 1920 թ. դեկտեմբերի 12-ին Հայաստանի  
ռազմակոմատի հրամանով Հայաստանի Կարմիր բա-  
նակում ստեղծվում է քաղաքական բաժին : Զորամա-  
սերում մտցվում է զինվորական կոմիսարների ինստի-  
տուտ :

Քաղաքամինների և ռազմկոմների վրա խնդիր և  
դրում՝ ճշտել բանակային մասսաների քաղաքական

ինդիբները : Համախմբել նրանց կուսակցության և  
խորհրդային իշխանության քաղաքականության ու լո-  
գունգների շուրջը : Նեկավարել զորամասերում տար-  
վող կուսակցական քաղաքական աշխատանքների ամ-  
բողջ սխտեմը և ապահովել կուսակցության ու Խոր-  
հրդային իշխանության հսկողությունը՝ հին բանակից  
մեր շարքերում մնացած անկուսակցական հրամատար-  
ների մարտական գործողությունների վրա :

Հայաստանի Կարմիր բանակի քաղաքական մարմին-  
ները յենթարկվել են մի շարք վերակազմությունների :  
Կովկասյան բանակի Հեղափոխական Ռազմական Խոր-  
հրդի հրամանով՝ 1922 թ. սկզբներին Հայաստանի Կար-  
միր բանակի քաղաքաժինը վերակազմվեց ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՎԱՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ՔԱՂԲԱՃՆԻ : «Այդ վերակազ-  
մությունը բարեւ եր ՌՍՖԽՀ և Անդրկովկասյան պե-  
տությունների միջև 1921 թ. գեկտեմբերի 8-ին կնքված  
կոնվենցիայից :

Կարմիր բանակի կրծատման հետեանքով ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՎԱՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ 1922 թ. սեպտեմբեր ամսին,  
ռազմակոմատի հրամանով նորից վերակազմվում ե՝  
սկզբում վորպես ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱԶԻԳ. Դի-  
ՎիԶիԱՅԻ, ապա, վերջնականապես՝ Հայկական հրա-  
ցանաձիգ դիվիզիայի քաղաքամինի : Դիվիզիայի քաղաքա-  
մինն այդ ըրջանից անմիջականորեն յենթարկվում է  
Կովկասյան Կարմրադրոշ Բանակի և Բ. Գ. Կ. Բ. քաղ-  
աքարչություններին ու ճշտությամբ իրագործում նրանց  
բոլոր հրամաններն ու դիրեկտիվները :

Համարանակային բնույթ կրող բոլոր այդ դիրեկ-  
տիվները Հայաստանի քաղաքամինների կողմից լրաց-  
վում են Անդրկովկասի և Խորհրդային Հայաստանի կոն-

կրետ իրականության և ազգային առանձիւահատկությունների պայմանների համաձայն :

Դիվիզիայի կազմակերպման սկզբնական շրջանի մեր հիմնական գժվարություններից մեկն ել քաղկազմի խողիքն եր, վորի կարիքը նույնպես չատ մեծ եր: Այս մասին ես հետո :

### 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐՄԻՔԻ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱԶՄԸ ՅԵՎ ՔԱՆԱԿԻ

Հայաստանի Կարմիր բանակը հիմնականում համարվեց դաշնակցական քայլքայված զորամասերի դինություններով:

Բանվորներից, բատրուկ, չքավոր ու մէջակ գյուղացիներից բացի, վոչ վրքի զենք չկստահեցից:

Դաշնակցական բանակից մասցած՝ բոլոր մեծահասակները, Արագմժողկոմատի 1921 թ. սուրբելի 4-ի № 21 հրամանով, մինչև 1920 թ. դեկտեմբերի 25-րդիրացըլցին: Նախկին բանակի՝ մեզ համար քաղաքականապես վատանակալու և սոցիալապես խորի տարրերը փոխաբենվեցին բազմաթիվ կոմունիստներով, կոմյեխտականներով և Հայաստանի խորհրդայնացման որերին գործող առանձին ջոկատների՝ փորձված, բուռութած ու խիզախ մարտիկներով:

Հայաստանի Կարմիր բանակը մինչև 1920 թ. դեկտեմբեր ամսի վերջերը վերակազմակերպվում է հետևյալ կերպ. յերկունդ կազմի՝ 3 հետեվակ բրիգադ, 1 հեծյալ բրիգադ, յերկունդ կազմի՝ 3 հետեվակ բրիգադ, 1 հեծյալ բրիգադ, յերեք մարտկոցային կազմի՝ 4 ըրբեաթնյակ, 2 առանձին գումարատակներ, 2 զրահադաշտ («Մուսայիլյան և Ազատամարտ», մասնագիտական մասներ և այլն): Ընդհանուր թվով բանակն իւ

կազմում ուներ՝ 6300 մլին, 44 հրանոթ, յերկու զըրահապատ զնացք՝ 5 հրանոթով և 35 դնդացիրով ու 236 դնդացիր և 835 թուր<sup>1</sup>) —:

Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակը հետագայում ամրող ճիկի ընդհանուր կրծատաման համարական և՛ միավորների և՛ քանակի տեսակեաից կը ըստաման և յենթարկվում, ընդունելով իր այժմյան տեսքը: Վերանվանվելով Հայկական Հրացանաձիգ ՚ի վիզիա, վորը սկսած 1921 թ. մարտ ամսից, մտնում է ամրող Կարմիր բանակի ընդհանուր սէստմի մեջ, կազմելով նրա մի տեղաժամ մասնիկը:

### 4. ՄԵՐ ԲԱՆԱԿԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՅՈՒՆ

Ծանր եր Հայաստանի Կարմիր բանակի և նյութական դրությունը: Այս խնդրով իմաստ լուրջ մտահոգված ելին և՛ իշխանության և՛ զինվորական բարձրադաս մարմինները: Դաշնակցականներից վորովես ժա-

<sup>1</sup>) Այս ավարտիքը վեցցած են ընկ. Ա. Բաղդասարյանի «Քաղաքացիական պատերազմները Հայաստանում» գրքից: Պետք է նշել, վոր ընկ. Բաղդասարյանը չփափենք իր մեղքով, թէ տեխնիկական պատճառներով, թական ավալների և մի քանի պատմական փաստերում նախ ընկել է Հակասությունների մեջ, յերկրորդ՝ գանվել է անբարեխիզն: Սրինակ՝ 1. Սվինների քանակը հշածու գրքուց և տալիս 6300, իսկ «Հայկ. դիվիզիայի անցյալից» գրքում 6000 (եջ 23). 2. իր այս գրքում ընկ. Ա. Բ. գրում ե, վոր «Խեզմժողկոմի 1924 թ. դեկտեմբերի 12-ի հրամանով կազմակերպվում ե Քաղբաժին (եջ 69), մինչդեռ Քաղբաժինը կազմակերպվել է 1920 թ. դեկտեմբերի 12-ին, ինչպես ինքն է գրում նույն այդ գրքում: 3. Ընկ. Ա. Բ. գրում ե, վոր 1929 թ. սկսեց կանոնավոր կերպով լույս տեսնել «Կարմիր Զինվար» (եջ 76), մինչդեռ «Կ. Զ. Ա. Բ. սկսել ե լույս տեսնել 1920 թ. ձիաւ ե, գորոշ ընդհանուր մերժությունը: Թ. Խ.

ռանդություն ստացած՝ ավերված, սոված Հայաստանը բանակի նյութական գրությունը փոքր ի շատե բարելավելու ուղղությամբ շատ բան անել չեր կարող: Խորհրդային Ռուսաստանից և Ադրբեջանից ել այն ժամանակ հնարավոր չեր չոչափելի ոպնություն ստանալը, փորովհետեւ Խորհրդային Հայաստանի և այլ Հանրապետությունների արանգում դեռևս կանգնած եր իր հոգեվարքի վերջին գալարումներն ապրող մենչեկցան Վրաստանը:

Մեր բանակի նյութական գրությունն ավելի վատթարացավ քաղաքացիական կոիվների բնօթացքում և առանձնապես Երեվանը թողնելուց հետո: Այս ուղղությամբ լուրջ բարելավում մենք նկատում ենք 1922 — 1923 թվականներից: Կարմիր բանակայինի սննդի կալորիան 1990-ից՝ 1923 թ. այժմ 1929 — 1930 թ. հասել է 3866-ի:

Հրամքադկազմի նյութական գրությունը միանդամայն և բարձրացել ու բարելավվել է, բավացել է կարմիր բանակայինի և հրամկազմի հանդերձանքը անունով և՝ քանակով և՝ վրակով: Առողեքացիայի գծով ևս այժմ բարձրամասերին կից կազմակերպվել են հատուկ թեյարաններ և ճաշարաններ կարմիր բանակայինների և պետկազմի համար: Այս առթիվ յերկար խստելու կարեք չկա, վարովհետեւ այդ բոլորը հանրահայտ փառեր են, բարին ել զիտեն թե ի՞նչովես և հակնդում ու սնվում մեր բանակը:

Զնայած գեղարություններին, չնայած նյութական կենցաղային կյանքի ծանր պարմաններին, մեր յերիտասարդ կարմիր զորամասերը 1920 թ. և 1921 թ. քաղաքացիական կոիվների ժամանակ ցուցահանեցին դժվարու-

թյաններին դիմանալու և այն հաղթահարելու դարձանալի տոկունություն:

Հայաստանի դորքերի՝ Կարմիր բանակի վերակազմության ըրջանում մեր շարքերն եյին թափանցել դաշնակցական բանակի զզվելի, կեղտու ու այլանդակ դերի առանձին տարրերը՝ հարբեցողության, գողության գասալիքության առանձին գեղաքեր, վորոնց զեմ այն ժամանակ մենք ամբողջ ուժով կովում եյինք, վորուս Կարմիր բանակի հետ անհամատելի յերկույթների: Մեր զորանոցի քաղաքական կայունությանը մնասող, հնից ժառանգ մնացոծ այդ հիմնադրամին յերեղույթները մենք շատ կարծ ժամանակում արմատախիլ արինք՝ չնորհելի քաղմարմինների, հրամատարների, կոմունիստների և բանակային հասարակականության յեռանգույն ջանքերի:

Տակապին չոփարտած կազմակերպչական ուժատանքները, տակապին չսկած ուսուցման լուրջ զործը, Հայաստանի կարմիր բանակը հարկադրված յեղավ նուրեց կովի բոնվել տաղարված բայց գեռես իսպառ ըրջախախված, ամբողջովին զգնաթափկում դաշնակցական հակահեղափոխության հետ:

1921 թ. հունվարի 22-ին Բաշ-գյառնու ըրջանում մեր խումբ մատուցերիսաններ, տեղի դաշնակցականների հետ զենք բարձրացըին Խորհրդային իշխանության դեմ: Այսուեղից ել սկսվում է կատաղի բոնամարտերի, բաղաքացիական կոիվների ըրջանը Հայաստանում:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՎԻԶԻԱՆ ԳԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՎՆԵՐՈՒՄ

1921 թ. վեմբարյան դաշնակցական հակահեղափոխական ավանդուրան և մեր բանակի մարտական

դրդմամբ : Խոկ վերջինիս նպատակն եր Հայաստանը դաշնակցության ձեռքով և ամրող Անդրկովկասը դարձնել պայքարի մի պլայցիամ ընդդեմ ԽՍՀՄ-ի :

Մեր խոկ շարքերում յեղել են և գեռես կան «խելքներ», վորոնք տրամադրիր են գաչնակցության փետրվարյան ավանդուրան համարել «հետեւանք մեր քաղաքականության խոչը սիստեմի», բռնադրավումների խստության, գյուղացիության վրա զործ դրած ճնշումների» և այլն և այլն :

Ինչ խոսք, վոր նման կարգի մտածողներն որյեկտիվութեն ջուր են ավելացնում դաշնակցականների ջրաղացին, վորոնք դեռ այսոր ել զրում են թե չժողովուրդն ինքն ապատամբեց, մենք պարտապոր ելինք անցնել հակաբայելվիկյան շարժման գլուխը» :

Այդ տեսությունն անշուշտ բղիում եր դաշնակցական կուսակցության սոցիալական եյության հիմնովին սխալ քաղաքական գնահատությունից, վոր նկատվում եր վոչ միայն առանձին ընկերների մոտ այլ և Հայկոմիուսի նախկին նացոնալ-ռեկոնֆյուսական զեկավարության մեջ : Միայն կուսակցության նոր զեկավարության որոք դաշնակցությունն ստացավ իր եյության և քաղաքականության ճիշա՝ լենինյան գնահատականը, վորի հետեւանքով մեր գործունեության անցած ըլքանի մի քանի հիմնական մոմենտներն այժմս կարելի յե և պետք է վերաճանել ու վերաբերավորել :

Ամենեվին չացաւաելով 1920 թ. վերջերին 1921 թ. սկզբներին մեր թույլ տված սխաներն ու չափազանցումները՝ պետք ե ասել, վոր փետրվարյան ավանդուրան կազմակերպվեց դաշնակցական հակահեղմուխության ձեռքով, Անգլ-Ամերիկյան խմբերի վրայի

Կարմիր զորքերի յերեմնի «կարմիր» համատարժութապետ Դրոն դաշնակցության թելադրանքով ող-

37

տաղործելով իր գիւղն ու ղաջառնը<sup>\*)</sup>)՝ խորհրդայնացման առաջին խակ որերից սկսեց նախապատրաստել վեարդարյան ավանտյուրան։ Դրոյի կազմակերպչական «տաղանդի» միջոցառումները (կերի և պարենի բացակայության պատճառով ուստական զորամասերը Հայաստանից Ադրբեջան տեղափոխելը, դաշնակցական դնդպաետ Թարխանյանին<sup>\*\*)</sup>) կարմիր բանակի շտարաւմ բարձր պաշտոն տալը, դաշնակցական խմբավետ Մարգարինին<sup>\*\*\*)</sup> Յերևան քաղաքի պարետ նշանակելը, Ղաղախի գեռես մայիսյան ավատամբությանը մասնակցած խիզախ մարտիկներից կազմված հերոսական Յ-րդ գնդի մաս-մաս ձուրումը մյուս դրամասերի մեջ և այլն) վեարդարյան վերահաս ավանդայւրայի պղպանաներն և լին, ազգանշաններ, վորոնց վրա նայվում ելին սառնասիրա, վորոնցից համապատսխան վճռական և արագ քաղաքական հետեւությաններ չարվեցին, մամենակ պահանջի համաձայն։

Այս փաստերը վկայում էն այն մասին, վոր մեր չարքերում վեերդարյան ավանդայւրային նախորդող արձանում յեղել են դաշնակցությանը և նրա նախկին

<sup>\*)</sup> Դրոն մոտ 1 և կես տարիս մնաց կարմիր բանակի հրամատարի պաշտոնում։

<sup>\*\*)</sup>  Թարխանյանը 15 որից հետո փախակ Բաշկյանի՝ դաշնակ մասուզերի խմբերի մոտ, և քաղաքացիական կակիների ամբողջ ժամանակ զեկավարում եր դաշնակ բանդաների զործողությունները՝ ընդդեմ Խորհրդային իշխանության։

<sup>\*\*\*)</sup> Վար սպառագործելով քաղաքի պարետի պաշտոնը՝ սկսեց մասուզերի խմբերից խմբեր կազմել մեր գեմ։

Դործիչներին թերաքնահատելու բացահայտ կերպով արտահայտվող աննդենցներ։

Այսաեղից ել պիտի անել այն հետեւությունը, վարդաշնակցական տիրապետությունը 1920 թ. նոյեմբերի 29-ին ուժով տապալելուց հետո, մենք նույն վճռականությամբ, նույն անողոքությամբ չշարունակեցինք չաշտագությամբ չաշտագությամբ մի պրոլետարական հեղափոխության ժամանակ։

Յեթե այդ արդպես լիներ, յեթե մենք ժամանակին կանխելինք դաշնակների և նրանց դործակալ Դրոների ձեռք առած միջոցները, յեթե մենք ըստ արժանույն ճիշտ դնահատելինք դաշնակ-մասուզերիստական խմբերի մասին չըջաններից՝ ստացված տեղեկությունները, ժամանակին և լիակատար կերպով մաքրելինք մեր զինվորական, Քիլիցիայի և այլն մարմինները «համակին» դաշնակներից, անկոսուած նրանց ավանդայւրան չեր ընդունի այնպիսի չափ ու ծավալ։

Այսպես, ուրեմն՝ 1921 թ. վետրվարի 18-ին ոկտոբեր դաշնակցության ավանդայւրան, վորի նախերազանքն եր հունվարի 22-ի զինված ընդհարումը, Բաշկյանուու մասուզերիստեկուակների հետ։

Հայաստանի կարմիր զորքերի առաջին լուրջ մարտական զործողությունները դաշնակցական բանդաների հետ տեղի յեն ունենում Յերեվանում և նրա շրջակայքում։

Դաշնակ սովանտյուրիստների վազուց մշտելած

Ալիսավոր պլանն եր՝ բոլորովին անջատել Հայաստանի կարմիր զորքերը 11-րդ բանակից, կտրելով Յերեվան։ Դաղախի խճուղին, փակել նահանջի բոլոր հնարավոր ճանապարհները, մաս-մաս կոտորել նրանց և փետրք-վարի 18-ին գրավել Յերեվանը։

Դաշնակցականներն սկսած փետրվարի 14-ից, իրենց գլխավոր պլանի վաղուն համապատասխան հարձակումներ սկսեցին՝ Բաշդյանու, Եջմիածնի, Աշտարակի, Կոռայքի և րուրի հնարավոր ուղղություններով՝ կարմիրներին բնաջնջելու համար։ Դաշնակների բանդուները կազմակերպված ելին՝ կուլակներից, ողեկուլյաններից, հոգեգորականներից։ Նրանց մեջ կային նաև մառվերի զոսով բերված միջակ դյուզացներ, անգամ չքավորներ։

Բանդանների «հերոսները» մեջ Հայոնի գեմքերն ելին՝ խմբավետ Մարտիրոս, Խնկո, Սմբատ, Արամ, Յեսորոն և այլն։

Բազմաթիվ այդ բանդանները կերակրվում ելին գյուղացներից թալանած հացով ու անառաններով։

Կարմիր զորքերը ընկ Մալքառնովի համատարությունը հակառակորդին արժանի դիմադրություն։ Էարդ տարու համար արդեն մշտել ելին իրենց ոլոնը, կատարել ուժերի վերապատճեռում։

Կարմիրների հրամանարտության փետրվարի 15-ի հրամանով բնդունած պլանի երրորդյունն եր՝ թողնել, վոր դաշնակցական բանդանները մոտենան Յերեվանին, կտրել նրանց իրենց «բաղայից» ողոկման մեջ առնել և վոչնչացնել։ Թէ վորքան ճիշտ եր դաշնակ բանդաններին առկան նկատություններով կենարոնին։ (Յերեվանին) մոտ քաշելու պլանը, այդ թողնենք զործին ավելի

առելոյակ մասնագետների քննողատությանը։ Միայն մենք այսքանը կասենք, վոր այդ պլանի մեջ իրենց արտահայտությունն են զտել դաշնակցության և նրա զինված բանդանների թերապնահատության ելեմենտները, մի գրություն, վորով մենք թեկուզ ժամանակավոր, բայց զրկվեցին— թե ուզմական և թե քաղաքական տեսակետից—մի կարեվոր վայրից, ինչպիսին Յերեվանն եր։

